

ՎԵՑԵՐՈՐԿ ՏԱՐԻ



ՅԵՐԱՅՈՒՅՆ
ՆՈՒՆԱԳՐԱԳԻՏՈՒՄ

ԽԱՐԱԿԱԿ

Գինն է 10 կ. Գալատներում 12 կ. 1911, Շաբաթ, ՄԱՅՍԻ 21-ին. Թիֆլիս. №21



Ծ Ի Ր Ի Ա Ն Ջ Ա Գ Է

XXX-ԱՄԵԱՅ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

ЯНЦ.БЫХОВА

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1911 թ.

VI

Տարի

ՄԱՔԱԿԱ

VI

Տարի

Երգիծարանական-սատիրական պատկերազարդ շաբաթամթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՄՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱՐԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և զլփիչ, անկեղծ և կեղծաւոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների:

Անհրամբես քերք բոլոր ընթացիկների համար

«ԽԱՔԱԿԱԿԱ» շաբաթընթացիկն է, շաբաթընթացիկ էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քեֆերդ ուզի Հասցէն՝ Тифлисть Музейный пер., Редакция „ХАТАБАЛА“:

Արտասահմանից՝ Tiflis Gaucas Redaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակող՝ Ա.Ս.Տ. ԵՐԻՅԵԱՆ

«ԽԱՔԱԿԱԿԱ»

Բ Ա Ք Ն Ե Գ

Տարեկան	5 ռ.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

«ԽԱՔԱԿԱԿԱ»-ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՉԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ռ.

Տարեկան	12 ռ.
Կէս տարին	6 ռ.
Երեք ամիսը	3 ռ. 50 կ.
Մէկ ամիսը	1 ռ. 20 կ.

100 տարով բաժանորդագրելու ցանկացողին 75% զեղջ
Ձրի կարգացողներին պէտք է նկարենք
Գ Լ Ք Ի Վ Ս Ե Ր

«ԽԱՔԱԿԱԿԱ» ՕՐԱՑՈՑՑ

1911 Մ Ա Յ Ի Ս 31 օր

21

Суббота Զ Ա Ք Ա Թ Ծծածո
Հունիսի 7

- 22 (կիր.) Այսօր Թառայանը կուզուրի Շամախի Շիրվանդաղէի յօրեկանը կազմակերպելու համար Ընդառաջ կըղորդա գայ Գեօգալ Աղարաշին:
 - 23 (բ. 2.) Տօն սրբոյն Կախատի, որ «Արօրի» № 4-ում իր տաքութեան տատիւնը հասցրել է 75 աստիճանի: Հրաւիրւած են Լոնդոնից մասնագէտ բժիշկներ:
 - 24 (գ. 2.) Սիվերը այսօր բաղաբային վարչութեան հաշիւները անալիզի կենթարկի, որոնցից կըստովորի շատ նոր բաներ, ինչպէս՝ եօթնակի հաշուադաշուութիւն, կրկնակի գրութիւն, եռակի պահանջ, հաշիւների նահանջ և այլն:
 - 25 (դ. 2.) Տարեգարձ Հրատարակչական ընկերութեան օրի, I ընդհանուր ժողովին ձեռնու համար բերած են եղել 60 վոդրօ ջուր. իսկ հետեւեալ ժողովի համար շորս տակառի պատուէր են տւել:
 - 26 (ե. 2.) Այսօր օրացոյցիս I և II համարները «Կոնֆիսկաւատ» կըլինեն, իսկ խմբագիրը երեք ամսով կաքորուի Արասթուման կամ Բօրժօմ:
 - 27 (ուրբ.) Պա՛ք: Այսօր մտավաճառները և ձկնապանները խնդիր կըներկայացնեն էջմիածնին պատերը վերացնելու համար: Կըհամաձայնեն ամբողջ միաբանութիւնը բացի երեքից, որոնք կառաջարկեն միայն մեծ պատը վերացնել:
- Աստղագէտ—տօմարագէտ և օրացոյցագէտ
Փարիմուզ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԳԱՍՊԱՐ ԾԱՌԱՅՋԱՌՈՒՑ ԱՍԿԻ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԲԱՐՁՐ ԿԱՄՕՔՆ ԽԱՔԱԿԱԿԱ ԱՐԱՄԱԶՆԷՏ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՐԴՈՒԲԱԿԱ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՉԱՑ ԵՒ ՓՐԿՉԱՑ, ՉԱՀՐՈՒՄԱՐԲՈՂՈՐ ՄԵԾԱՄԵԾ ՊԱՏԱՐԺԱՆԱՑ ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ

Պատմական գայս օր
Տամբ՝
Կոնդակ մեր նոր

— ԵՐԻՅԵՅԻ ԱԼԷՔՍԵՆԳԻ ՄԻՆԵԱ-ՉԱԿԻ ԱՄԷՆ

Սիրեցեալ մեր.

Նախախնամութիւնն այնպէս կամեցաւ, որ դուն էսօր տօն պիտ կատարես, իսկ էգուց էլ Վերայի բաղերում անփունն ճաշ ուտես:

Հալալ լինի Բեգ.

Սակայն պիտ տեսնես, որ աշխարհիս վրայ պէս-պէս փորձութիւններ կան:

Ազգ մի, որ մի ճաշ ուտեցնելու համար այդչափ երկար պիտ պատեցնել տա՛յ — երեսուն տարի պիտ ծառայեցնէ, դա ի՞նչ ազգ է, եթէ ոչ հայոց ազգը:

Սա ամենամեծ փորձութիւններից բէթարն է, թէ եւ ոչ ոք չի նկատել:

Չեր քրտնաջան ծառայութիւնները յօգուտ մայրենի գրականութեան, բազմիցս վարձատրել են թքով եւ հայոյսանրոյ:

Գեղարեստին մատուցած ձեր գործունէութեամբ ժամանակին դուք ուժակոծել էք եւ ուժակոծելուց յետոյ էլ չէք ընկճել:

Ջրհանդամը այդ էլ ոչինչ: Դուք բազմիցս եւ ուրիշ դրչադուրիւններ էլ շատ էք արել—սակայն ինչ անենք, որ հայոց ազգը երեսուն տարուց յետոյ է միայն խելքի գալի:

Ի տրիստուր բեղմնատար ծառայութեանցդ, այսօր, զամենայն մեղո՛ւ եթէ ունեցեալ կաս եւ կամ գործել ես՝ կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, արթուն թէ քնած ժամանակ ընդդէմ Համբարձումի Առաքելեան, թէ երբեմն Լէօյի, «Մշակի» թէ «Նոր-Դարի», «Արձազանքի» թէ «Մուրճի» եւ կամ ընդդէմ գեղեցիկ սեռին.—մենք գայդ զամենն ՆԵՐՆՄ-Ք եւ ԱՄՆԻՍՏԻԱ շնորհեմք:

Ազգային դրամէն շնորհեմքն Չեգ տասնեւհինգ հազար ռուբլիս, թէ եւ գիտեմք, թէ տասնեւհինգ միլիօն եթէ տալու էլ յիւնները, կորած փող չէր—ու Բեգ անել հալալ էր, քան թէ մեր միլիոնչիներուն:

Բայց վախենամք եթէ շատ ունեւոյ լինես—խապառ մոռանայցես զմայրենի լեզուդ, գիրն եւ գրականութիւն եւ ոսերէն խօսէիր, ինչպէս այդ սովորութիւն է մեզ՝ հայոցս. ուստի եւ սո ժամուս տասնեւհինգ հազար տամք, իսկ երբ քառասունեակդ տօնենք՝ մենք՝ Չեգ շնորհեմք կրկին քսանեւհինգ հազար, իսկ յիսնամեակիդ հարիւր հազար:

Դուն քէֆդ քոք պահէ:

Բարձրացուցանեմք գ-Քեգ զտաս եւ չորրորդ էտաճն եւ մի անգամ էլ պատուէր տամք—դարդ չանել ոչինչի համար:

Վասն գի, դուք էլ տեսնում էք, սո հէր օրհնած, որ վատ ժամանակներումն ենք սպարում:

Դէ՛ էլ ինչ ես մտածում:

Ուրիշը որ չգիտենայ, դու խօս գիտես
այդ ամենը:

Վասպար աղա Կարապետ
Խաթարալա ամենայն հայոց

Տամ

այս կոնդակ-հրովարտակ
'ի 22-ն մայիսի
'ի 1911 թ.
ի պիտուած և
թաղթաղարդ քաղաքն
մեր՝
Թիֆլիզ
յուրախուժեանս ժամու
խակ
մեր խաթարալայութեան՝
վեցերորդ տարին:

Ճ Ի Բ Վ Ա Ն Զ Ա Գ Է

էլէլ է չի էլէլ մի Շամախի անու-
մով քաղաք է էլի էդ քաղաքումը վախ-
տով մէ օրինաւոր մարթ էլ էր ապ-
րում. էս մարթու անումը Մինաս է
էլի. էս Մինասն էլ ի՞նչ վուր շահիլ է
էլի՝ ասիլ է իրան իրեն:

—Մինչևի՞ ի՞նչ ու ունի համա էսպէս
պտիմ ման գայ, կօսէ, արի լօթիանայ
փսակեմ, կօսէ:

Ու փոսակի է:

Մէ օրինաւոր Օսան անունով հայ
աղչիկ է արի:

Կսիկը ի՞նչ վուր երկօքիսացիլ է, մար-
թուն ասիլ է:

—Մինաս, երկունոքիս եմ, կօսէ:

—Ու՛րիշ լաւ, կօսէ, բաս թէ բե-
րում իս բեր, կօսէ, մէ քոչրով (խո-
պօսանքով) լաւ տղայ բեր կօսէ, վուր
թաքաւորի բարեբար մարթ, ըլի կօսէ:

—Վո՛ւր թաքաւորի:

—Ալէքսանդրի, կօսէ:

—Բաշուտայ, կօսէ, ու բերում է
մի տղայ՝ վուր համ քոչոր (հայրվար
խոպուպ և վունց թէ հոպոս) է ունե-
ցի, համ էլ Ալէքսանդրէ անումը:

Հէրը, խեղճ Մինասը վուր էրէխի
սփաթին մտիկ է տալի, էն չախնէթ
ասում է:

—Սրան վուր նաւթի հորումը գցիս,
կօսէ, էլի չի կորչի, կօսէ, բաս արի
տունը սրան պահ տամ ու ինքս էլ
գնամ Դիրբէնդ, Ղուբա, Պետրովցիկ
կուռը իմ չարէս տեհնիմ, կօսէ:

էնինց էլ անում է:

Տանը մնում է գէղէն՝ Օսանը, Ալէք-
սանդրէն, իժում էլի մէ տղայ ու էլի
մէ պատիկ աղչիկ:

էս տան տէրը ու տան կառավարո-
ղը դառնում է Ալէքսանդրէն:

Ալէքսանդրէն պատիգ ժուգը գնում
է փալմասիօններու շօլը:

էստի Ալէքսանդրէն տեհնում է վուր
փալմասիօնին է սովորելու, դուս է գա-
լի ու գնում է պիրացուների շօլը,
էստի օխտը կլասի էկզամին վուր տա-
լիս է սակութար մինդալ է ստանում
ու զէմուղէմ մտնում է ուէզգի շօլը:

Խիլիմ ժուգ խիլքի ճամփին մանգա-
լուց եզը, ի՞նչ վուր տեհնում է, վուր
խիլքը չին բաժնում, վիր է կինում ու
գնում է Ղուբա, հօր եղևից:

Հէրը հիւանդ է էլած ըլում, ու
վուրթուն վուր տեհնում է վունչինչ
չի խօսում, մենակ ասում՝

—Յճօ. մինձացիլ իս այ:

Ի՞նչ վուր Շամախին բաթմիշ էլաւ
սրա՝ Ալէքսանդրի, Արէլով աղպէրների՝
Օխանէսի ու Սանդրիկ Սպօր ու մէկէլ
Թառայենց Սեղրակի գօրութիւնցը,
խալիս փախաւ գնաց Բաքու:

Ալէքսանդրէն էլ էտի գնաց 1875
թւին, էստի խիլիմ գրքեր՝ սիլի բիլի
գրած բանիլ է կարթում ու էտ օրու-
նից օրթում է ուտում, վուր ինչ աղչիկ
տեհնի՝ սիրահարլի:

Վունչ մի գուրծի վրայ շկանաց
կաղնի թէ չէ ինչով ու ունից էր
պակաս. պակաս միլիօնէր կուլէր, ու
չկարաց վուր ըլէր:

Արուտեհանից մինչևիլ իրիգուն գըր-
քիլ էր կարթում, գուրծ չէր շինում,
մէկէլ, մէ վուրտ տեհնիք, վուր մէ
ուսի աղչիկ հիդ սիրահարլի է, խիլքը
կորցրիլ է:

էս աղչիկը խիստ սիրուն աղչիկ է
ըլում: Մեր Ալէքսանդրէն ուզում է
էլի, վուր սրա հիդ փսակի. համա
չունքի նա ուրիշ աւտի է ըլում, էդու
միգէզով սրա՝ Ալէքսանդրի վուրտը
կտարում է:

Վուրտը կտարում է թէ չէ, աղչիկը
փախչում է, գնում, կորչում է Բագ-
լից. Ալէքսանդրէն փիքը է անում,
փիքը է անում ու իր անումը փոխում
է, Ալէքսանդրի տիղ՝ Շիրվանդաղէ դը-
նում, ի՞նչ վուր թագադան կնքում է:

Հէրը ի՞նչ վուր լսում է, վուր վուր-
թին իրան ուրանում է ու փոխանակ
Մինասաղպէի՝ Շիրվանդաղէ է դառնում,
ջգրում է, ու մէ դայիմ մեռնում է:

Խիլիմ մէրն էլ ժամ-պատարաքով
օրթում է ուտում, վուր իր վուրթին՝

Ալէքսանդրը, Շիրվանդաղէն Մինասի
գաղէ է:

Ալէքսանդրէն հուշաթ է կաղնում ու
իրա խօսքը դուս է տանում ու մինչ-
կլի հիմա էլ Շիրվանդաղէ է մնում:

Ի՞նչ վուր Շիրվանդաղէ է դառնում
վիր է կինում ու ինքն էլ գրքեր է
գրում, սիլի-բիլիութիւններ մոգոնում,
էս փատանը, կօսէ, էսինց սիլից, էն
փլանը, կօսէ, էսինց խաթաթի մարթ
է, նա կուռք է, կօսէ, սա փալաս է,
կօսէ:

Հարուստներու վրէն ինչեր ասիս
մոգոնեց, անսովիստ ու անշիգար մար-
թիլ է ին, կօսէ:

Հարուստներու սիղանիլը՝ սուփրէն
կի մտեհան չհանից:

Բերնի համ ունի, ասում ին:

Մայ:

էս բանից եղով գալիս է միր
պիտուած Թիֆլիզ քաղաք, ջէր մտնում
է «Մշակի» ընդախցիէն, էն չախը ի՞նչ
վուր Ամբարցումի իգնու թոն էլ չկար
էնդի ու «Մշակումը» գրում է, իժում
ի՞նչ վուր Արծրունովի հետ կուռում ին,
գնում է «Արծաղանքի» ընդախցիէն:

Խիլիմ ժուգ էդի մնում է:

Լաւ-լաւ բանիլ է գրում:

Իրան-իրան համ մոցիթլութին է ա-
նում, համ կոնցիստուրիութին, համ
փսակում է իր գրքերով աղամարզուն
աղչիկանց հետ, համ բաժանում է:

Պատի, նամուսի, լազաթի վրէն
էնդամ խօսում է, մինչևիլ անպատ-
ուութիւնի ու աննամուսութիւնի մօզա
էլ է նընգնում միր քաղաքումը:

Թրիատրներում դուս է բերում
մարթկերանց ու մայմունի թաւուր խա-
ղացնում է:

Սալխն էլ տաշի է տալի ու Շիրվան-
դաղէն էլ էդ վուր տեհնում է՝ ուրա-
խանում է:

Մեր օդորմած հոքի Գալիցիը Լա
վուր տեհնում է սրան մէ ջէր Մէտեխ՝
հօվանալու է զրգում—մէ վուրտ էլ
տեհնում է, վուր Մէտեխը վունչինչ չէ
կանում անի. Օղեսա է զրգում էր-
կու տարով. թոդ էնդի ջնուղները,
կօսէ, դաս առնէ, կօսէ:

Սա էլ գնում է:


էս Օղէսումը սա խելիմ խիլք է ճա-
րում ու ի՞նչ վուր գնում է Պարիժ՝ էն-
դի գրում է «Ձնութի ականջը»: էտինց
էլ պտեր ըլէր:

Հիմի ասում էն վուր զուղէ միթում



—Երկրպագեցէ՛ք հարուստներին, աղօթք արարէ՛ք սրանց վերայ, որովհետեւ՝ նրանք աւելի զօրաւոր են, որովհետեւ սրանք փող, փարայ, ոսկի-արծաթ շատ ունեն եւ փառք էլ պիտի նրանք ունենան. երկրպագեցէ՛ք, երկրպագեցէ՛ք:

Կ Ե Ն Ն Ք Ը Ժ Ն Կ Ն Ե Ր Ի Վ Բ Ա Յ



Մանկութիւն,

Երեխայութիւն,

Երիտասարդութիւն,

Ժերութիւն

Թէ գրի «Լեօնի գլուխը», «Օխանէզի քիթը», «Համբարցում Մելիքովի թանխէքը», «Ատրպետի միրուքը» և այլն, և այլն, և այլն բաները:

Աստուծ օրհնէ, փիս մարթ չէ, համա էն է, վուր խիօք էլ չէ:

Ի՞նչ վուր սրամէն քառուռն տարի աղաք Բաքու գնաց, բան վուր խիօք ունենար նաւթի օրմօտքը թողած, չոտկը՝ հետաք-առուտուքը գէն զցած, դա վիւր է կենում ու պրատակօյններ է գրում՝ «Հրդեհ նաւթագործարանում», «Դործակատարի յիշատակարանը», — ինչի ախպէր՝ «Միջիօնների յիշատակարան» վուր գրէր, ու՛րիւ լաւ չէր:

Արի ու աստ:

Էս էլ վունչիչ. ի՞նչ վուր էստի ցօցիալութիւն նընգաւ վիկացաւ ու կօտէս, ինքն էլ միջիօնէր ըլէր, փախաւ Պարիս:

Էնդի էր մինչկի մէկէլ տարին: Մինչկի Քոն շուրը միան ընկաւ ու էկաւ էի էստի:

Հիմի էստի է:

Սանդիսիան լաւ խասիաթի վրէն է:

Սանդիսիան էլ խասիաթը փոխում է:

Մաղքամ իշտանը ու՛րիւ լաւ ունէ:

Սկզբունքները սաղ-սաղ կուլուած է:

Մէ քան սրանց մէջ դուրթ է, էտէլ էն է, վուր էս մարթը հիգնուելիքը ջանիւնում է.

էրեսին վուր մտիկ տաս քաննինգ-եռուռն տարեկանի սիաթ ունէ. ու դուրձքերը վուր տեհնիս՝

քաննումէկի մէջն է, կօտիս:

Էսօր կի նրա եռսուն ամեակի տօնը պիտ կատարենք:

Մաշ լօթիանայ լաւ կատարինք:

Գաապար Կարասուգով

Ա Յ Կ Ն Ի Կ...

(Նմանութիւն)

Քաշալ գլօնի պարիկ կուգես.

Դեղին դէմքի կրակաւ կուգես.

Կուրած մասիղ մատնիք կուգես.

Այ կնիկ, քո հօր հէրն անիծած.

Շան կնիկ, քո հօր հէրն անիծած:

Բարակ դոշիլ քամքակ կուգես.

Ժուտիկ ջանիկ կարսէտ կուգես.

Կուրած մէջքիլ քարձիկ կուգես.

Այ կնիկ, քո հօր հէրն անիծած.

Շան կնիկ, քո հօր հէրն անիծած:

Իւրկի տեղակ շալար կուգես.

Թփիսլ ոտիլ տուփի կուգես.

Պատաւ հայիղ դու մարդ կուգես.

Այ կնիկ, քո հօր հէրն անիծած.

Շան կնիկ, քո հօր հէրն անիծած:

Յիքօ



ԳՆՈՒԹԱՅՆ ԱՂԱ ՉԵՆ.

Այ՛, ջան կըսիմ օր վրաս չհերտօտիս ու գրածս քթոցը կօտիս: Ի՛նչ էնիմ, աղքար, ասրես անպէս է վայ եղիր. օր տասնց ուշփաթէ (կաշառք) հէջ բան եօլայ չի էրթայ: Օրինակի խաթեր.

1. Կաթուղիկոս պիտի յըլլիս, տարիմ յառաջ թատարուք պիտի տեսնիս. դազէթաջիներուն բերանը պիտի անուշցնիս, օր քեզի գովին, յերկինքը հանին, տեղոստեղ հրեշտակ շինին ու դուզ էջմիածին հասցնին:

2. Ակեար եպիսկոպոս յըլնիլու իշտան ունիս. դուն ալ թատարուք պիտի տեսնիս, վերին խալաթ, վերին յաջնամբուր, վերին շեշիա-շեշիա իքրամներ:

3. Թէ օր տէրտէր պիտի յըլլիս, գիշեր ու գօր ժամ պիտի վազիս, թէգ-թէգ ծուռը պիտի դնիս, գեղի քէհին պիտի կշտացնիս. աղաներուն բերանը պիտի անուշցնիս, վերին միկիտան պիտի տանիս, վերին ջան ու դուրբան պիտի յըլլիս, վերին տուն պիտի կանչիս, վերի ձեռը պիտի պագիս օր խնդրքիդ ձեռք քաշէ: Ասքանով չիս պըրծնի՝ վենձ կաշառքը յետեն է: Արդան կոնցիտար պիտի տանիս: Բեղի անտեղ եկզամին պիտի էնին: Թէ ծոց ու ջերդ լիքն է, թէ քանիմ գլխ շաքար տէրերին հասցրիս իս, թէ փէշիդ տակը խալաթներ ունիս, կէս անթուայ մէջ եկզամինը գլխ դուգայ կը ու գրին կը. «Ի ժամ հարցաքննութեան տիրացու Ղուկասն երեկցաւ քաջ հմուտ յեկեղեցական գիտելիս և ըստ ամենայնի արժանի քահանայական կոչման»: Ասով ալ չիս պըրծնի. սրէն էկաւ. ձեռնադրող եպիսկոպոսին,—ասոր ալ պիտի շահիս, խաթըր առնիս: Հարնայիս, տէյսօր տէր Ղուկաս դառնաս, գլխ պսպկած հաւ. չիպ չպաղ տուն, հասնիս կը:

4. Գեղի քէհայ, ես գլուին դառնալու իշտան ունիս, էշդ, ձիդ, կովդ, խոտնոց պիտի ծախիս, օր քաղքի զօրաւորներուն բերանը պիտի սարգիս: Գեղիդ մէջ կծան զբեկցներուն բերանն ալ պիտի սարգիս: Յամէքին բերանը մէկ-մէկ օսկոս պիտի կօխիս օր մօւրագիդ հասնիս: Հմը մուրագիդ հասար թէ չէ. արթիդ սրէն քուկդ է. քիշմ եկին յըլլիս. տարւանմ մէջ ինչ օր խաթիլ իս, յետ կը բերիս. անտեղ յետ տեղոստեղ քար է:

5. Թէ վարժապետ իս՝—գուզիս օր տեղդ դայիմ յըլլի, յոտնբերուդ տակը սապոն չըրնին, գազէթներուն մէջ հոգեբարձներուն գովէ, գլխները եղէ:

6. Հարնայիս, ես վեր մէկ կաշառքները հէքիաթ էնիմ: Մաշինան (հեկարթուր) էս ձէքից տէյսօր մէկալ ձէքը, տէյսօր թեհան, Սասմբուլ վերքան օր դուլուղաւորներ կան՝ բիթուն վկայութեն կուտան, օր կաշառքը մութ տեղը լուս կուտայ կը:

7. Վերքան կանցիլարներ կան. վերքան աղաներ. վերքան դուլուղաւորներ, ատոնք բիթուն գիտեն օր կաշառքը գէշ բան է. կաշառք ուտողին դուլուղից վանդին կը: Ատօր հմար ալ աս աղաները հէջ, հէջ, հէջ, հէջ կաշառք չին առնի. առնողին էլ բիարուտ կէսին:

8. Թեհրանին թէ Բապահանին սերտ քաղաքի մէջ հարիֆին մէկը օրը կէսօրին կնկան սպանեց. ու գնաց պօլիցին ալ յիմաց տեց թէ ես կնկաս սպանեցի: Տարիմ նաքախար նստաւ, տարիմ ալ թիֆլիզի խելոնոցի մէջ պահեցին. յեղև ալ դատաւորները հաստատեցին թէ խելաւ է, բաց թողեցին: Հիմի աս խելաւը գնացեր է յուրիլ քաղաք, հոգաբարձուների նախագահ է դառիր, վենձ վենձ գործերի խառնի կը, պատգամաւոր գլխ կը. ճառեր կաէ կը: Յանտէր մնաս դու կաշառք. ինչէր ըսիս օր չիս էնի:

9. Մարսին մէջը խելաութի մէկը աղքատ մարդում ուլիցին մէջ սըպանեց, քանիմ օր նաքախար նստաւ. դատաւորները վճեցին յախտնտկան Միպիլ. Հմը չեմ գիտէր ինչը էղաւ օր աս խելաւ սիբիբականը հիմի կուլաի չլէն է, քաղքի իշխան է, ոչ Սիպիլը գնաց, ոչ քաղքէն հեռացաւ: Հալը չսիմ, յանդէր մնաս դու կաշառք, ինչէր ըսիս օր չիս էնի:

Կաշառքը սատանան հրեշտակ դարձնէ կը. հրեշտակը սատանայ. անմեղին կախաղան հանին կը, մարդասպանին կախաղանից ազատին կը:

Ղարաջի Մարգար

ԱՆԳՐԱԳԷՏ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ՄՏԲԵՐԻԾ

Լաւ է մարդ հոգսով ծանրաբեռնի, քան պարտքով, որովհետև հոգը մարդ իր հետ գերեզման կըտանի ու զազանիք կը մնայ. իսկ պարտքը ոչ:

Շատ կարդալը աւելի օգտաւէտ է, քան շատ գրելը:

Հիւանդին 5 կոպէկ չենք տալիս բժշկելու, բայց երբ այդ հիւանդը մեռնի, 5 բուրլի կըծախսենք, որովհետև գիտենք որ վերջին անգամն է:

Մոն-սի



ԳՐԶԻ ԿՈՏԱԿՆԵՐ

(Մի օրհորդի մ'օճօլօգը)

Նս մի չքնաղ աղանիկ,
Դեռհաս՝ ինչպէս տաարակիկ.
Երգս անուշ ու մեղմիկ,
Քան սոխակի գայլայլիկ:

Արևը որ խաւարի,
Նրա տեղը դուրս կըգամ
Լուսինն էլ որ խոռովի,
Իմ փայլովը լոյս կըտամ:

Այստ՝ կարմիր ալ վարդ է,
Կուրծքս՝ սպիտակ մարմար է.
Բայց, ախ, ախոս, բախտ չունեմ՝
Մէկը չկայ ինձ անէ*):

Լսեց և ապէլ տեց՝ Մոն-սի



*) Բարեհաս թոյլութեամբ մեծին Գասպարայ Կալատուզովի ես կաննէի, եթէ գիտունայի, որ մարմարէ կրծքիդ տակ մարմարի սառնութեամբ սիրտ չկայ:

Մոն-սի

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

ՊԱՐՈՎԱԿԻՐ ԲԱՔՈՒԱՆ

«ԿԱՐՄԻՐ ՍԵՆԵԱԿ»-ՆԵՐԻԿ *)

Իմ աղիկ-խալաֆ ակպերացու և դատաբաշի համայն «Սաթարալա» սուտ կուսակցութեան Գեատագար բնագ կալասօզովեանցին

Մին պրախօզ շատ պարով շամախեցի այրի տիկին և կնանկրոնց ու օրհորթ-ների ապեկունշա Գեօզալ Ազարափից

II

Ր Ա Պ Օ Ր Տ

Առաջ-առաջ երկու կարճատու խօսք ամ ուզում ասամ «Սաթարալի» կարթացողներին: Հօվ քի իմ առչի ըստպօրտու կարթալ ա, նա իրաւունք ունի աս երկրորթ ըստպօրտու ալ կարթիլի, չիւնքի լեազաթ չի տալ, առաջինը չկարթողը երկրորթը լեալ չի հասկանալ: Հօվ քի առաջինը չի կարթած՝ աս երկրորթը կըկարթի, նա զլուրը քարովը կըտայ իրան օխտը պօրտի հետ-

*) Տես «Սաթ.» № 19 և 20.

Մ Տ Ո Ր Ա Ն Ք Ն Ե Ր

(Ազուստ Սորինդերգից)

I

ԿԱՏԱՐԵԱԼ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻԻՆ

Երբ տեսնում եմ խոզի ձագին իր մթին պատուպարանում, աղտոտութեան մէջ չոգած՝ աղբը ծամելիս, ես երեւակայում եմ, որ նա գտնում է կատարեալ ներգաշնակութիւն իր շրջապատի մէջ. նա լոյս չի տեսնում, իսկ գարշահոտութիւնը նրա համար ամենալաւ օդն է. նրան հարկաւոր չէ աշխատել, այդ նրա գաղափարն է, իսկ եթէ մի անգամ ուտելուց յետոյ նրան յաջողի քնել ևս, մինչև նորից խժսելը, այն ժամանակ նա իր ողջ էութեամբ կեանքի ամենամեծ ուրախութիւնն է զգում:

Եթէ փորձէին նրան բացատրել՝ որ նա կանգնած է մութի ու կեղտի մէջ, նա այդ կընդունէր իբրև հակա-ներգաշնակութիւն ու կործանւած կըհամարէր իր ողջ իլլիւզիան. անկասկած չէր հաւատալ և նրան՝ որ բացատրէր նրա կեանքի ոչնչութիւնը ու «խաւար» կըհամարէր այն իսկ լոյսը՝ որով լուսաւորէին նրա պատուպարանը:

Գազառի փտած կըձայցընեքը նրա ճանապարհի ծաղիկներն են՝ հարկաւոր չէ խոզիկին զրկել այդ զարդերից, հարկաւոր չէ աւելել ու մաքրել, եթէ ոչ կըհիւանդանայ, կըբժքախտանայ...

Թիֆլիսի եարմունկայի մի քնակիչ՝ սովորած քաղաքի ծանր օդին, մի անգամ

նսն: Հօվ ալ քի ինձանայ կընկզանայ աս խօսքերիս խաթրան, նա կարող ա պող ճիւր խմի, որ սըրտը հովանայ:

«Սաթարալի» կարթողները իմացան, որ ես «Կեարմուր սենեակի» զալըմը նստած և ան սենեակը կնիք թովլամիշ անիլի եկած մի տղի հետնան սօյրաթ բաշտամիշ արի:

Հինչպէս ասեցի, ես աս տղին լաւ ամ ճնանչըմ, համա գոչչաղ գեալլաք մատուշկան, օրիորթ Պապլիսթայեան և տիկին Դինջղուրմագեանը ինձ անանց շինալ սարքալ ին քի, խեղճ կաւալերս քոռացալ էր, չէր ճնանչըմ, իլլաքի որ հեարդամբիլը Ղաբարաղի սայեաղ ալ խօսում ի, լաի էր էշանըմ, հէանց էր իմանըմ քի մին կոյս կնիք ա քիթալ, ալ չի ասըմ, որ տատից ալ մեծ ամ, իրան բոյի թոռներ ունամ:

— Ի՞նչպէս է ձեր աղգանունը, սիրելի տիկին, — ասեց նա մին շակալաթ թաւազա անիլով:

— Սէյ աիւ քու աղգանունթ առաջ ասըմ չէս, որ ինձանա ես հարցնում, — ասեցի ես մեազալամիշ իլիլով. աչկերիս մէջին ծծաղիլով:

— Իմ անունս է Սաշա Դօղկուզօվիչ Դոնդուգեանց, ինձ մաղազին ունեմ երեք տեղ և պրօմսլա էլ ունեմ:

— Իմ էլ անըմս Մանուշակ ա, հօրս ա-

մեկնեց լեռնային վայրերը ճանապարհորդելու, և այնքան վատ զգաց իրան այն թարմ օդի մէջ, որ ուշաբեկից ինչպէս ինչ տեղերին քիլին մի ս տախտակի վրայ բակոյտ. նրան կարծես հրաշքով թւաց, թէ զգաց մի մայրենի բուրմունք և այդ նրան տեց օգտիրիտութեան կատարեալ իլլիւզիան:

II

«ՄՐՈՂՋ ԱՆՑԵԱԼԸ ՀԱՄԵՄՍԱՏՈՒԹԻՒՆ Է ՄԻԱՅՆ»

«Ամբողջ անցեալը համեմատութիւն է միայն», ութսուն տարիքին հասնելով՝ այսպէս է վերջացնում Գէօթէն իր «Փառուստ»-ը:

Տարբեր եղանակներով ու հարուստ փորձատուութեամբ անցըրած կեանքիս վերջում, այն է՝ վաթսուն տարիքում, ես դեռ կըրկնում եմ Գէօթէի այդ խօսքերը:

«Յաճախ կեանքը զարմանալի կերպով նմանում էր գծիքին, բայց լինում էին ժամեր — երբ համեմատում էր երկնի նկարագրութեան հետ, թէև այդ պատահում էր մի պահ, մի րոպէ միայն:

Ամռան օր, կապուտակ ծովի հեռաւոր ափի կանաչոտ հարթութիւն, ընտանեկան խաղաղութիւն, երիտասարդ գեղեցիկ զաւակ, խաղաղ համեմաշխութեան տօնի առիթով — այց եկած բարեկամներ ու ազգականներ, ոսկեղօծ բաժակներում փայլող գինիներ, նւագներ, ուրախական սիրուն հագուստներ, փաղաքշական խօսքեր, բարի հայեացքներ, մեծահոգութիւն...

նըմը Բախիշ Ղարաշարաբեանց:

— Իսկ ձեր ամուսնու անունը. — հարցրեց լօթիս:

— Ես ամուսին օնիմ ոչ:

— Ուրեմն ամուսնացած չէք:

— Մըն տարւայ հարս ամ իլալ քի ամուսինս մեալ ա, ծովումը խեղուալ ա:

— Շատ ցաւում եմ, շատ, միթէ ձեզ նըման տիկինը առանց ամուսնու կարող է իրջանիկ լինել: Օ՛, ո՛չ, ո՛չ:


Մտկըմս ասըմ ամ զշատ բեսար ես անըմ, օր ցաւըմ ես... շուն... որթի, չորս արախա ունէս, տունումը գոյչազ հարս ունէս, նրանց թողացալ ես մեանաղ, կէս քիշերին, եկալ ես ստեղ շէյիթբազդունի... ցաւող ես քեզ համար ցաւի, իմ ցաւովս մի տանջելիլ:

— Շատ հրաշալի է ձեր անունը, տիկին, գիտէք Մանուշակը իրքան անուշ հոտ ունեցող ծաղիկ է, նոյն անուշ հոտը ձեզանից էլ է բուրում: Ինչո՞ւ ենք նստել, դնանք ծովի ափը զրօսնելու, մի փոքր մաքուր օդ ձեզնք:

— Ես կարալ չըմ ծովի զրաղ քինալ, ամօթ ա, տեսնողը կասի եադ տղի հետնան աս կէս քիշերին հի՞նչ օնի...

— Ա՛խ, որքան անարատ էք դուք, եղալի էք:

— Պեարանթ թեամիզ պեացի, ես կզնը



Բայց այդ բոլորը չորս ոտերով կազացող մի շինծու համեմատութիւն էր:

Բարեկամները՝ մարդասպաններ էին, ազգականները ոտխներ և երիտասարդութիւնը լի էր նախանձի չար զգացումներով:

Ժամանակի ընթացքում բոլորը դարձան մահացնող թշնամիներ: Որդիքը ընդգէմ կանգնեցին ծնողներին, ամուսինները բաժանեցին, երեխան խուճապեց աղջիկներին մօտ, ընտանեկան կապերը թուլացան, վիշտ, ատելութիւն, սխ, վերջապէս երկինք—գըժժիք:

Սակայն խաղաղ համերաշխութեան տօնի յիշողութիւնը դեռ ապրում է—որպէս համեմատութիւն կամ ուղղակի որպէս բանաստեղծութիւն, որովհետև այն նման էր մի ինչ-որ երազ գեղեցկութեան—

«Անկարագրելի, աննասանելի գեղեցկութեան»:

III

— Ս Ի Ր Ե Լ —

Սիրելի կնոջը—այդ ընդհանրապէս և միշտ հաւատար չէ գէպի նա զգացած սիրոյն, կարելի է և արհամարհանք տածել գէպի նա ու նրա վատ կողմերը, բայց ինչ-որ մի բան կապում է մեզ նրա հետ ու հանգըստութիւն չկայ տուանց նրա ներկայութեան: Սակայն յաճախ այդ հանգստութեանը հետեւում է սպանող թախիժ և թախիժն էլ կրկին անհանգստութիւն, թէև կարող է որ-րոշ ընտանրութիւն չկրել այդ տևողութիւնը: Մարդ ենթադրում է, թէ ինքն իրան

չամ,—ասեցի՝ աշկերս վերա չոխրով:

—Ա՛խ, ներողութիւն, դուք ինձ չհասկացաք, ևս ձեզ նզ չասացի, այլ եզակի, այսինքն մի հատ էք, ձեզ նմանը չկայ, ամօթով էք:

Քիշերայ սայաթի 11-ը ա, սաղ զալըմը 2 աղայ ա մնացալ, մի կնիք: Տրանն ճոկ-ճոկ նստած ան, հեանց քի դուռնի ծեանը կեամ ա, Արդաւիլի փիշիգի պէս աշկները չորս արած գէպի տունն ան միտիգ անըմ: Մին ալ մենք անք մնացալ, չիմ քինացալ ան, հեարմարթ իրան սինպատիային տարալ ա չամ իմանըմ հօր ջահաննամը:

—Ուրեմն գնանք, սիրելի Մանշակ:

Մենք վեր կացանք, Մաշա-լօթիս անատէր կնգան ցէքին չիմացայ հինչքան փող տիրաւ, տուռնան տիւս եկանք, կլօխը պեաց ուսի լակոտը ֆայտոնը հազրալ էր, գօնթիգը քաշալ: Մաշա-լօթիս նրա ալ ցէքին փող տիրաւ:

Նստեցինք ֆայտոն, ասացի տեսնամ աս ախմախը ինձ հօրտեղ ա տանիլու: Փայտոնչին քշեց, Մաշան սուս ա, հեանց ֆայտոնչին մին սաղ կռնին, մին սօլ կռնին ցէքի դրօստով կօփում ա, ֆայտոնչին ալ մին սօլա ծուրմ ֆայտոնը, մին՝ սաղ: Մաշա-լօթիս չի խօսում. խօլերի պէս պինդ կպալ ա կողքիս, մտկըմս ասըմ ամ, այ Մաշա, տափը կոխամ կլխիթ ցիլինդը շապը, տիւ

լաւ կզգայ նրան մօտիկ լինելով՝ և խաբար հիմնում է այն անհանգստութեան վրայ, որը փորձում է նրա բացակայութեամբ:

Հէնց դրա համար էլ անհմայք է ամուսնական շաղկապը, թէև ամուսինները ատում են միմեանց, խարում ու տանջում, բայց ազատել իրարից չեն կարողանում:

Պօտում են սովորութեան մասին. ի՞նչ բան է այդ. աւելի լաւ է հրաժարել մի որևէ անմիտ բանից և ընտելանալ համերաշխութեանն ու խաղաղ կեանքին, քան թէ մնալ դժոխքում, որին ոչ ոք չի կարող ընտելանալ:

Քիշերային թիթեռնիկը չի սիրում լոյսը. բայց լոյսը նրան քաշում է—այդ հօ չի առաջանում այրելու սովորութիւնից:

Սյղ արդէն այդպէս է, ուղղակի այդպէս, թէև մենք չենք կարողանում բացայայտել: Մարիկ



Մի՛ հարցնիր

—Հայրիկ, ի՞նչ բան է կուլար:

—Մի հարցնիր երբեք այն բանի մասին, ինչ որ չգիտես:

Ոնչու համար են ծափահարում

—Հայրիկ—հրճանքով բացականչեց պատանին, թատրոնում օպերային ներկայացումը վերջացնելուց յետոյ, երբ իջնում էին վարագուրը—հանդիսականները ոտի կանգնեցին և աղմկալի կերպով ծափահարեցին, ինչպէս բոլոր ուրախ էին և բաւական, որ օպերան վերջացաւ:

ալ մարալ ևս քիթալ... որ շորերս հանամ, քամագաս բաւալա բարբիքը վերունամ, կօրսէտիս տակի շորերը հանամ, մէջի պեամբազը տիւս պերում, իրես ալ լւանամ ան վախտ որ իմ թայարս տեսնես, սրաթ կը թափես, շորերդ հանած կըփախչես, գահլաթ կըքինա:

Փայտոնչին կաննեց մի պեացը տունի առաջին: Մէք փալաքաններով պեացբացանք լափ տիւրերի ատաժը: Տա գաստինցա ա, անըմը «Իմպրեսալ»: Լակէյները չորս եանան մօտացան, մին օթաղի տուռնը պեացեցին, մասով դուարին ձխտեցին, մին ալ տեսայ առանց նօթի լամփերը վառեց: Մին լաւ կրաւաթ, թեամիգ պեարցերով, ստօնը, ստօլի վերայ մուսեր տիրած: Մաշա-լօթիս պալտօնը հանեց կախ տաւ, ետով ալ պենժակը հանեց: Ես նստեցի: Լակէյի հետնան չիմացայ ուսերան-գիւրջերան հի՞նչ խօխեց, լակէյը տիւս եկաւ:

—Ի՞նչու ձեր շապը չէք վերցնում Մանըշակ ջանիկ,—ասեց Մաշա-լօթիս բեղերը հէլլիլի մէջին սրիլով—միանգամայն ապահով եղէք, այնպէս իմացէք, որ ձեր տանն էք, այստեղ ոչ ոք չի համարձակել մտնել: Լակէյը տուռնը թրխիթրիկացրուց, Մաշան տուռնը պեացեց, չիմացայ հինչ ասեց, Մաշան տիւս եկաւ, քամագան միտիգ արի տեսայ քինացին հայեաթի գիւս, մտան

Ուղղել է

Պարս.—Ճանաչեցիք ինձ, պարսն:

Պօղոս.—Ոչ, չեմ ճանաչում:

Պարս.—Սյրպէս էլ պէտք էր սպասել: Ես այն վատ մարդն եմ, որի հետ որանից 5 տարի առաջ փախել էր ձեր աղջիկը: Հիմա ես ուղղել եմ: Յետ վերցրէք ձեր աղջկան և մենք կ'ընտանուենք:

Սիրանարածները

Պարսը.—Հէնց առաջին անգամ, երբ դու կը յանդգնես ինձ խաբել, ես ինձ կըրօսանամ:

Տիկիկը.—Ի՞նչ երկրորդ անգամ ի՞նչ կ'անես:

«Խ Ե Լ Ա Ք Ա Ր»

—Խնդրեմ հետևեալը թող ներս գայ, —ասաց բժիշկ Ծիպլի-Մատուրը հիւանդին՝ ընդունարանից ճանապարհ դնելով:

Ընդունարան մտան երկու տղամարդ: Ներանցից մէկը անցաւ մի կողմ և նստեց աթոռի վրայ, իսկ միւսը մօտեցաւ բժիշկին և ասաց.

—Ահ թէ ինչ բժիշկ. ձախ ոտս ինչ-որ հանդիսալ չի մնում... Ի՞նչը բոլէ մի անգամ կըսկում է անպիտանը...

—Հը՛մ... կըսկում է, տուում էք... Յետոյ ի՞նչ, վաղուց է որ կըսկում է...

—Այ, արդէն երեսուն տարի է...—հանգիստ ձայնով պատասխանեց հիւանդը:

—Ինչպէս թէ երեսուն տարի է,—ասաց բժիշկը նայելով հիւանդին, որ դեռ հազիւ քսան տարեկան լինէր...—Ի՞նչ է հարկէ ուզում էք ասել երեսուն օր... Այդպէս...

կուխնի, պովրի հետնան սկսեց խօսել: Ես, ալուստի մտայ նես, ցէքս կոխեցի Մաշի պենջակի ցոցի ջիբերը, հինչքան թուղթեր, պուճաճիկ կար ջիբըմը, հանեցի, կոխեցի ժակեախ տակը. տիւս եկայ շուշաբանդ, մին սաղ միտիգ արի, մին սօլ, տեսայ Մաշան լակէյի հետնան կուխնան տիւս եկած տիւսումը խօսում ա, ժիլետիլի ջիբան փող ա հանըմ տայ: «Ո՞վ խաթարախտների Աստօժ, ասեցի մտկըմս միբաշ փալաքաններան քաշացայ: Տուռնի շիւէցարը տուռնը պեացիլով ասեց.

—Պրիգիբօտ է:

Ես չիմացայ հինչ ասեց, ևս ալ իրան պէս ասեցի պրիգիբօտ և տիւս եկայ:

Փայտոններ շատ կար կաննած, նստեցի մինի մէջ, ասեցի Շամախիսկի: Փայտոնը քշեց, իրէք մուսութումը հասայ Փանտաղի համամի մօտ, վէր եկայ, վեց շահի տի ֆայտոնչիին, ետով ծուսեցի ան մին քիշայ, նստեցի ջեօկ ֆայտոն գիւրգ քինացի մեր տուն:

(Կըշարունակելի)

Մնամ քեզ թամարդու քու քիւրացու՛ր
Դեօզալ Աղաբաշի



ՓՈՔՐԻԿ ՓՆԻԿԵՏՈՒ

ՄԻՐՈՅԵՅՑԱՌ
ՅՈՅՑՈՒՄՈՅՅՅ

Դու էլ սուս, ես էլ սուս

Հր՛մ... է՛ յետոյ, ի՛նչպէս է նա կրակում...
— Թնչանօթի նման... նոյն հանգիստ
ձայնով և դէմքի լուրջ արտայայտութեամբ
պատասխանեց նա:

Ծիպլի-Ծատուրն հղրակացրեց, որ հիւանդ
դը մինչ իր մօտ գալը մի որևիցէ տեղ
կոնծած կը լինի... Բայց և այնպէս հարկա-
ւոր էր ոտի հարցը վերջացնել և նա խընդ-
րեց հիւանդին թեք ընկնել մահճակալի
վրայ և շաւարը հանել:

— Իսկ փողկապը թողնել... հարցրեց նա:
Բժիշկը այնպէս ձեռքերեց, որպէս թէ
չհասկացաւ, և սկսեց զննել ոտը:

— Ամենից շուտ թր տեղն է կրակում...
— Ծնկան վեր և բուդերից վար... Ես,
բժիշկ, նոյն իսկ վստում եմ, որ կարող է
տեղանջիս թաղանթը պատուել:

— Այստեղ ի՛նչ թաղանթի բան կայ, բայց
հա՛... հը՛մ... հը՛մ... Այդպէս ուրեմն կրա-
կում է...

— Ինչպէս մայր տաճարի ամենամեծ գան-
դը, բժիշկ... Մանուանդ փայծաղը, որը
անձրևից առաջ մարմանընում է ու մարման-
ջուր:

Ծիպլի-Ծատուրը արդէն չգիտէր, թէ ի՛նչ-
պէս վարել տարօրինակ հիւանդի հետ,
բայց հիւանդը ինքը հանեց նրան նեղու-
թիւնից...

— Բժիշկ, դուք զժառանգում էք հիւան-
դութիւնս որոշել... Ի՛նչ կայ... դա պատա-
հում է... Կամենում էք ես ինքս որոշեմ...
Ես տոտագում եմ կրամբամբում-բրակտա-
բրատարարումբիա հիւանդութեամբ:

Իծրախտարար ես այդ տեսակ հիւան-
դութիւնը չեմ կարող բուժել... հակաճանեց
Ծիպլի-Ծատուրը... Այդ բանը ոչ մի համա-
սարանում չեն ուսուցանում...

— Հապա ի՛նչ, իսկ սովորեցրել են ձեզ,
բժիշկ, մոծակի վրայ հեծած «կողբիլ» պա-
րելիս զիլ ձայնով դամբանական կարգով...
հը՛մ... Ձե՛ն սովորեցրել... Իսկ դուք սիրում
էք վիզը բրնձով փաթաթել սաթը լցած չի-
նելու համար և այժի միրուքի հետ միասին
շախմատ խաղալ և երբ հանգստանալու լի-
նէք լուսնի վրայ թքտախել շա՛... կարող
էք... Ի՛նչ էք ինձ վրայ այդպէս աչքեր
չսել... Ձլինի թէ կարծում էք, որ ես խե-
լագար եմ... Այո, ի հարկէ... Ձգիտեմ թէ
ի՛նչու են ինձ ամենքը խելագար համա-
րում... Տարօրինակ է... Բառակի տարօրի-
նակ...

Նա յանկարծ կամացուկ, սոսնքի ծայրե-
րի վրայ և մի կողմը նստած ընկերոջ վրայ
զգոյշ հայեացք ձգելով՝ մօտեցաւ բժշկին և
խօսի՛ լսելի շուրջով արտասանեց:

— Գիտէ՞ք... Ձէ որ ընկերս խելագար է...
Իսկ նրանք բոլորը ինձ են խելագար հա-
մարում... հա՛, հա՛, հա՛... հօ-հօ-հօ...

Նա քրքջաց վայրենի, սալառու աղբոյ
ձայնով և յետոյ գրգռանից ինչ որ մի թուղթ
հանելով՝ գիմեց բժշկին:

— Գիտէք, բժիշկ, թէ և դուք Նապոլեոն
Մակդոնացուն լագի իզով էք կերել,
բայց և այնպէս ինձ կատակի համար հար-

կաւոր է վկայական, որ ես աննորմալ մարդ
եմ... Ա՛յ, ես արդէն գրել եմ, և ձեզ հար-
կաւոր է միայն ստորագրել:

Թէ և Ծիպլի-Ծատուրը հոգեբոյժ չէր, բայց
գարձեալ կարողացաւ տարօրինակ հիւանդի
աննորմալ լինելը նկատել: Միայն մի բան
չէր հասկանում, թէ մի կողմը նստած ըն-
կերը ի՛նչու է իր մօտ էս խելագարին բերել:
Նա այն է՛ պատրաստում էր յայտնել, որ
ինքը ձեռնհաս չէ հոգեկան հիւանդու-
թիւնները հասկանալու, բայց յանկարծ
նկատեց, որ «Նելագարը» բռնեց աթոռ և
բարձրացրեց վերև... «Մի խաթա չըբերի
գլխիս, չպանի» մտածելիս ցնցեց Ծիպ-
լի-Ծատուրը և շուտամոյթ ստորագրեց վկա-
յագիրը:

— Mersi, բժիշկ... ասաց հիւանդը... Ահա
ձեզ երեք բուբլի այցելութեանս համար,
իսկ եօթը ինձ...

— Հա-հա-հա... ի՛նչ եօթը... հարցրեց
Ծիպլի-Ծատուրը:

— Ահա պատմեմ: Ես իմ այս ընկերոջ
հետ տաս բուբլու վրայ գրազ էի բռնել,
որ ձեզ մօտ կարող եմ ինձ խելագար ձե-
լացնել և դուք խելագարի տեղ կընդունէք
ինձ: Ձէ որ այսպէս էլ կդու. ահա պատշաճ
վկայագիրը: Յստակութիւն: Բարսեղ, զնանք
տարած փողով քէֆ անենք:

Եւ ընկերները քաղաքավարի գլուխ տա-
լով բժշկին՝ դուրս գնացին ընդունարանից...

Թարանութեան դասին

Աւուսցիք. — Եթէ դուք ունէք մէկ շապիկ և մի
ոմն ձեզ այն էլի երկրորդը, քանի շապիկ կունենաք
ընդամենը:

Աօսկերս. — Էլի մէկ շապիկ և ոչ աւել:

Աւուսցիք* — Ի՛նչու էք այդպէս կարծում:

Աօսկերս. — Արտիստն երկրորդը կրտսն իմ
փաքելի կգայր՝ Սուրբիկին:

Նրկաթուղու վազոնում

— Կարծո՞ք էք դուք ինձ տանլ կը մենք կը հաս-
նենք շին Նախիջևան:

— Ոչ պարտն, բայց Նախիջևանի երկաթուղու
կայարանում կտխած է պատից մի մեծ ժամացոյց.
Երբ մենք կը հասնենք այնտեղի կայարան, դուք կա-
կարող էք նայել ժամացոյցին:

Փետրատր քաղաքագէտներ

Կինը (կարգալով լրագիր). — Այ մարդ, որ-
քան տարօրինակ է, այս թերթում մի յօդ-
ւած կայ, որտեղ ասւած է, թէ Աւստրա-
լիայում գտնւած է թաշտանների մի նոր
ցնդ, որոնք չորս ստանի են: Ի՛նչ ի՛նչպէս
ևս կարծում, ի՛նչու նրանք չորս սո ունեն:
Մարդը (յօրանջևուլով). — Երեի, հոգեակս,
դրանք որոշ տեսակի քաղաքագէտներ են և
Արարչի սրբմութեամբ օժտւած են չորս
ստաներով, ուստի և նրանք միաժամանակ
կարող են կանգնել փողոցի երկու ծայրում:



«Баку»-ում կարգում ենք. «Լեւտով գիւ-
ղում մի օմն Вахрши աղգանունով ծախել
է իր օրինական կնոջը համագիւղացի ЧИНИ-
КИН-ի վրայ էս դեսեապին հողի. այսինքն
փոխարինել է իր կինը կէս դեսեապին
հողով:

Նոր տեսակի: բայց խելացի աւետրական.
ահա թէ ինչու. կինը վաղը կամ միւս օրը
պիտի մեռնէր և պարզ է որ պիտի գտնար
մի բուս հող, ուրեմն աւելի լաւ չէ որ մար-
դը նրան այժմեանից զերածել է Կէս դե-
սեապին հողի: Ի՛նչ ես կարծում, ընթերցող,
ծախսողն է խելացի, թէ աւնողը, մինչ ձեր
որոշելը՝ թող ներքի ինձ մի հարց տալ ու
իմ քուբիկներուն. դուք որ մի շանակէր
շլափի կամ շաւար հագնելու համար Շաւ-
արական կուսակցութիւն էք կազմում, լաց
էք ըլլում, դարաստովքայ էք ա՛նում, որ չեն
թողում ձեզ ում հետ ուղէք և որտեղ ուղէք
մանդալու և մասամբ նսրին և մասամբ նո-
րին...

Այժմ ի՛նչ կասէք ի՛նչու չէք խօսում. —
Միթէ այն կինը չէր կարող չհամաձայնել
իր «ախրոջ» առեարթն. Գլ էր խելը նրա
ձեռքից այդ իրաւունքը:

Գիտե՛մ կասէք «Կինն էլ համաձայն է և-
ղել, մինք ի՛նչ անենք»:

Ի՛նչ որ փոխութիւնը ձեզանից է, ես ի՛նչ
անում: Մի գէշը ցոյց աւէք որ աշխարհիս
երեսին տանց կնոջ համաձայնութեան բան
կղած լինի. ուրեմն տո՛ւտազը շարաշար
սուտ է, որ լաց էք լինում «մենք սարկական
կեանք ենք վարում, մենք խաղալիք ենք
մեր մարդոց ձեռն, մենք իրաւագործի ենք.
սունը մերը՝ խօսքը մերը. դուք որ մի աղ-
նարկով մարդուն խելքահան էք անում և
ձեր յեանից քաշ էք տալիս, դուք որ մի
քաղցր ժգխտով մարդուն գերի էք դարձ-
նում. միթէ կարող է այստեղ սարկութեան
մասին խօսք լինել:


Ձէ, կարող չէ, անուշ ջան:
Ի՛նչ որ չէ՛
Ի՛նչ էլ սուս. ես էլ սուս:

II

Ասա՛ ընկեր ջան, ի՛նչու ես լուս


«Кавказск. телегр.» կարգում ենք. —
«Մոսկւայում մի կին վարակելով իր ա-
մուսնուց վատ ցաւով վարակում է և իր
փոքրահասակ աղջկան, և ոչ մի հնար չգտնե-
լով բժշկելու՝ իր հարազատ գաւակի կեան-
քին վերջ է տալիս: Թէ որքան մեղմացու-
ցիչ են հանգամանքները այդ ցոյց կրտսն
քննութիւնը. փաստն այն է, որ մայրական
այն քնքոյ սիրան էլ է քարայնել... Մայ-
րական այն խնամատար մարդը ձեռքերն
են արիւնտուկը:

ԱՅՍՊԵՍ Է ԽԱՂԱՑՆՈՒՄ ՄԱՏՆԵՐԻ ՎՐԱՑ ԿԻՆԸ... ՏՂԱՄԱՆՈՒՄԻՆ



Հայր.—Ես կրցածիկանայի, որ իմ գուռակը միլիոններ
գանձար:

Մայր.—Իսկ ես կրցածիկանայի... որ բախիկա ինչ նմա-
նե՛զ:



—Գու՛ք սառնասուրճներ է՛ք դրճւմ, դու՛ք բանաստեղծ է՛ք:
—Այո՛ տիկին, ես ինչքո՛ւ և ես յոյս ունեմ, որ «իլլյաբա-
նուիլիաներ էլ ստեղծեմ»:

Մայրը դահիճ իր գաւակին, սպանիչ, ահա զարհուրելին և այն ի՞նչ չար ոյժ էր այդ ջրատար մօրը դրդել այդ գայլն անելու:

Անհաւատալի է, որ մի մայր,— լինի նա լրկոտանի, չորքոտանի, վայրենի կամ ընտանի,— այդպէս վարի իր բալիկի հետ— վերցնենք հէնց հաւը, նա ձու է ածում մի միայն նրա համար, որ ձագեր հանի, բայց որովհետև մենք գողանում ենք ու անուշ անում խեղճ հաւը նորից նոր ստիպւած է ածելու և այդպէս մինչև որ թուխս է ընկնում. այդ ժամանակ, այն ևս մեր շահերի տեսակէտից, գնում ենք նրա տակին մի քանի ձեր: և հաւը միայն հոսնողով կը պչուցում է իր գործին ու ճուտեր հանում, բայց տեսէք սրբան քնքշութեամբ է վարւում իր ձագակներին հետ և ինչպիսի հոգատարութեամբ մեծացնում է նրանց. փորձեցէք մօտենալ նրա ձագակներից մէկին բոնելու՝ տես ի՞նչ օյիներ կը հանի ձեր գլխին, անհաւատար կուի մէջ իր կեանքի գնով կը պաշտպանի իր բալիկին:

Արդ եթէ, մի հաւի փոքրիկ սրտի մէջ այդքան մայրական գութ կայ, միթէ այդ չկայ մեր մայրերի մէջ:

Միթէ և և Տոլստոյի պատմած այն մայրական զգայուն սիրտը այսպէս շուտ անզգայ դառնու...:

Ասա, ընկեր ջան, ի՞նչու ևս լուում. եթէ ևս հեռու եմ, ասա, մօտինիդ, նա էլ էն մէկին, էն մէկն էլ մի այլին, մի այլն էլ ուրիշին և այդ միջոցով քո պատասխանը ինձ կը համարի...:

Մոն-սի

ՄՏՔԵՐ ԵՒ ԱՅՈՐԻՉՄԱՆԵՐ

(Վ. Շերպիլիցի)

Ժամանակը մարդկանց թագաւորն է, նրանց և՛ սանգոճողը, և՛ գերեզմանը, ու ընծայում է նրանց այն, ինչ ինքն է ուզում, բայց ոչ այն, ինչ նրանք են պահանջում:

Ճշմարտութիւնը հաստատելը երբէք աւելորդ չէ, նոյն իսկ և՛ այն դէպքում, երբ ոչ մի կասկած գոյութիւն չունի:

Ոչ մի առաքինութիւն չի կարող անհրաժեշտութեան հետ հաւասարել:

Չէ որ հպարտութիւնը մի օր պիտի ընկնի, կոտրել:

Մօզան աւելի շատ շորեր է մաշում, քան ինքը մարդը:

Գեղեցիկ արտաքինի տակ յաճախ թագընւած է լինում տգեղ ներքինը:

Սէրը բուրրովին աչքեր չունի. նա կոյր է:

Ով իրեն չի սիրում, նա ուրիշներին էլ չի կարող սիրել:

Վ. Բարուհան

ԿՆՈՋ ԼՈՂԻԿԱՆ

Տիկ. — Պ. Գէորդ ինչպէս էք կարծում, ինձ թւում է, որ օրիորդ Մազեպեանը քանակազեղեցիկ աղջիկն է աշխարհում:

Պար. — Այո, շատ ճիշտ էք ասում:

Տիկ. — Իսկ նրա աչքերը, դուք ինչպէս էք գտնում, նրանք չքնաղ չի՞ն:

Պար. — Այո:

Տիկ. — Իսկ նրա փոքրիկ բերանը սրբան գեղեցիկ է և հրաշալի դէմք՝ որքան թարմ:

Պար. — Այո, կարող է լինել:

Տիկ. — Եւ նրա կազմաձեւը՝ սրբան նուրբ է, իսկ մազերը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

40 ՕՐ! ՉՐԻ!

Եթէ դուք 40 օրւայ ընթացքում չէք սովորի ազատ խօսել, կարդալ և գրել գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն և լատիներէն նորագոյն մեթոդով կազմած մեր ձեռնարկներով (ուրիշները բեկում են):

ՓՈՂԸ ՅԵՏ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ

Մի ձեռնարկի գինը ճանապարհածախսով վերագիր վճարով արժէ 1 ր. 10 կոպ., երկուսը — 1 ր. 90 կ., երեքը — 2 ր. 80 կ., չորսը — 3 ր. 65 կ., Պատւէրները կատարում է միակ պահապան ամբողջ Ռուսաստանի համար: С. Петербургъ, Петербургск. сторона Большой пр. № 56—609, Я. К. Петерс. 482 0—2 (կ. հ. շ.)

Ի-ԻՆ ԽՈՂԱՐԱՐԱԿԱՆ

ԿՈՒՐՍԵՐ

Լիակատար կուրս լեկցիաներ «ՊԱՍ-ԻԱՅ ԵՒ ՈՒՏԻՍԻԱՅ ՃԱՇԻ» ինքնուսուցման համար. մօտ 1000 ընդէպտ կերակուրների, խմիչքների, թխածքների, կօմպօտի, մուրաբաների քաղցրեղէնների և կարկանդակների և այլն: 300 երես խիտ տպագրած, գինը ճանապարհածախսով վերագիր վճարով 2 ր 60 կ.: Ցուցմունքներ ինչպէս կանոնաւոր կերպով տանել տնային տնտեսութիւնը և պատրաստել տնային համեղ ու սննդաբար ճաշ, միսը կոտորելու և սեղանը դարդարելու մասին յուշակածով, մօտ 100 երես, նկարներով: Գինը 1 ո. 20 կ., երկու գիրքը միասին 3 ո. 35 կ. (կարելի է մարկաներով). պահանջներով դիմել բացառապէս Я. К. Петерс, С.-Петербургъ, Петербургск. сторона, Большой просп. №56—609, 483 0—2 (կ. հ. շ.)

— Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառուում է —

Ն Ա Ր-Դ Ո Մ

ՊԱՅԲԱՐ

Վ Է Պ

ԳԻՅԵ Է 75 կոպէկ

Գլխաւոր պահեստը «Դուտտներըրգի»-ի գրախանութում, ուր և գիմում են գումարով գնողները:

ԲՈՂՈՐՈՎԻՆ

!! ՉԿԱՆ ԱՅԼԵՒՍ ՀԻՒԱՆԴՆԵՐԸ !!
 Եթէ Դուք հիւանդ էք սֆիլիսով, արի-
 պէրով, շանկիրով, սևուկան թուլու-
 թիամբ, Լամ Չեր առողջութիւնը քայ-
 քայսած է ձեանականութեամբ — պա-
 հանջկէք «Հանրամատչիի բժշկարան
 դպրանի հիւանդութիւնների ազամար-
 դու, կանանց միզասեռական օրգաննե-
 րի», նկարներով և բազմաթիւ բէ-
 ցեպատներով մօտ 250 երես: Գինը ճա-
 նապարհածախով ու վերադիր վճարով
 1 ր. 30 կոպ.: «Ժողովրդական բժշկա-
 րան-ձեռնարկ», չափահասների և ամեն
 տեսակ հիւանդութիւններ բժշկելու
 համար, բացի գաղտնի հիւանդութիւն-
 ներից, առանց բժշկի օգնութեան մօտ
 400 երես: գինը ճանապարհած. վերա-
 դիր վճարով 1 ր. 40 կոպ.: Երկու գիր-
 քը միասին 2 ր. 50 կոպ. (կարելի է
 մարկաներով): Միակ պահեստը Ս.-
 Սեդերբուրգ, Սեդերբուրգ. տարած,
 Большой просп. № 56—609 Я. К.
 Петеру 484 0—2

(Ե. Կ. 2.)

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

ԳՐԱՄՍՈՖՈՆ ԸՆԿ.
Գ. Ս. ԳԼԻԹԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
 Թիֆլիս, Գոլով. պրոսպ. № 6, Ժողովար. տակ
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՆՈՐ

ՊԼԱՍՏԻԿՆԵՐ
 Բազրատի, Մաջիտի,
 Չաբարի և Իսմայիլի
 — Ե Ր Գ Ե Ր Ը —
 3 րուելու 2 րուելով
ՓՈՒԱՐԵՆ

Վ.Ա.ՃԱՌԻՈՒՄ ԵՆ

ՄԱՐԱԿԱ

կամպլեկտներ

Շ Գ Ե Ղ Կ Ա Ջ Մ Ո Վ	
1906 թ.	5 ր.
1907 թ.	7 ր.
1908 թ.	7 ր.
1909 թ.	7 ր.
1910 թ.	7 ր.

Հին համարները հատով թիֆլիսում
 10 կոպ., թիֆլիսից դուրս 12 կ.:
 Գինը՝ «Նաթարարա»-ի գրասենեակին

Բ Ժ Ի Ծ Կ

ՓԱՆՕ ՄԱՆԴԵՆԵԱՆ

Մանուկատու թիւն՝ ՄԻՉԱՍԵՌՈՒԿԱՆ,
 ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւն-
 ներ:

Ընդունում է հիւանդներ իր սեփ.
 տանը ամեն օր առտ. 9—12 և երեկ.
 6—9. Ելիդուստեան փող. № 28.
 00—91



Первокл. ресторакъ „АННОНА“

„Здание Артистического Общества“

Сод. Я. Т. Бондаренко Ежедневно отъ 1½ час. до 5 час.
 до 2-хъ час. ночи. ИГРАЕТЪ КОНЦЕРТНЫЙ Александръ.
 СТРУННЫЙ ансамбль подь управленіемъ пополудни и вечеромъ отъ 10 час.
 — ЗАВТРАКИ, отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 1
 час до 5 час. пополудни: изъ 2-хъ блюдь—60,
 трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская;
 билліарды. Имѣются кабинеты. Получены Ростовск. раки,
 имѣется живаяр ыба; отъ жары можно спастись только въ „АННОНА“ —
 52—3

Ի Է Ս Տ Ո Ր Ը Ն - Ճ Ե Ծ Ե Ր Ը Ն

„ԴԻԼԻ ՊՈՒՉՈՒԻ“

Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ թամամշեան
 քարվանսարայի տակ

ՄԻՇՏ ԹԱՐՄ ՄԹԵՐՔԻՑ

— Եւրոպական և ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Ընտիր ըմպելիներ, զով կաբինետ-սենեակներ մաքուր խո-
 հանոց ու պատրաստակամ ծառաներ

25—4

Լոյս տեսաւ և վաճառուում է

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

●●X●● և ●●X●●

Հ Ա Ր Ե Ի Ա Ն Ե Ր Կ Ր Ն Ե Ր Ը

ՔԱՐՏԵԶԸ

Մեծադիր և զուեաւոր

Մասշտաբ 1:800,000

Երկարութիւնը 2 արշ., 10 վերշ., լայնութիւնը 1 արշ., 7 վերշ.

Կազմեց Գ. Վարդանեան, նկարեց Գ. Դիասերդիկ

Գ Ի Ն Ն Է Զ Բ Ա Բ Ը Լ Ը

Վաճառուում է թիֆլիսում՝ ըզլոր գրավաճառանոցներում, Բագուում՝ «ՏՈՒ-
 ՐԱԿՆԻՔ»-ի մօտ:

Գլխաւոր պահեստը՝ թիֆլիս, Ванкскій пер. № 7 Գ. Վարդանեան կամ
 литографія Дюстердикъ, Судебная 29. (Ե. Կ.) 6—1



«ՀՈՐԻՉՈՒՆ» ԴԻՏԱԿՈՎ



«ԸՆԿԵՐԻ» ԴԻՏԱԿՈՎ
Ե Ի Ր Ի Ը Ն Զ Ը Պ Ի Ի

ՈՐ Ի Ն Հ Ա Ր Ա Տ Ա Ն Կ...